

Ոուզան ՂԱԶԱՐՅԱՆ Երևանի պետական համալսարան

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԺԱՆՐՆ ԻԲՐԵՎ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՈՒ ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅԱՆ ԹԵՍԱՅԻ ԲԱՑԱՀԱՅՏՍԱՆ ԶԵՎ

Գրականագիտությունը վաղուց փաստել է, որ թեման և ժանրը միանգամից չեն, որ գտնում են իրար. դա պատմական երկարատև գործընթաց է: Մանկության թեման ու ինքնակենսագրական ժանրը տևականորեն զարգանում, կատարելագործվում են առանձին առանձին: Ի դեպ, դրանց կապը որոշակիորեն հաստատվում է 18-րդ դարում: Հաջորդ դարում այն ունախատ գրողների համար դառնում է կարեռը միջոց դեռահաս հերոսի ձևավորվող բարոյական դիրքորոշումները ցույց տալու գործում: 20-րդ դարում, երբ «ինքնակենսագրականությունը» դառնում է գրականության ամենացայտուն գիծը, մանկության թեմայի ու ինքնակենսագրական վեպի (կամ վիպակի, պատմվածքների շարքի) միջև եղած աղերսն ավելի է բարդանում, ստեղծված «ժանրաթեմատիկ» կառուցվածքը դառնում է կատարյալ միջոց ձևավորվող անհատի ու խորը ճգնաժամի մեջ գտնվող հասարակության ճշացող բախումն արտահայտելու համար:

«Ինքնակենսագրություն» բառը (հունարեն՝ “autos” – ինքը, “bios” – կյանք, “grapho” - գրում են) ցույց է տալիս կենսագրության այնպիսի ձև, որտեղ ստեղծագործության գլխավոր հերոսն ինքը հեղինակն է: Սակայն, ըստ պատումի ձևի, հեղինակը միշտ չէ, որ անմիջականորեն հանդես է գալիս իր անունից: Նույնիսկ կարելի է ասել, որ դասական գրականությանը նշանակալի չափով բնորոշ է հեղինակային «ես»-ի արտահայտության երրորդ դեմքը (Չ. Դիքենս, Լ. Սոլյուոյ և այլք), ինչը բացատրվում է հեղինակների գեղարվեստական նպատակարությամբ: Սովորաբար, երբ խոսքը փաստագրական ինքնակենսագրության մասին է (կամ գրված է փաստագրական նպատակադրությամբ), ապա այն, որպես օրենք, գրվում է առաջին դեմքով և ընդգրկում հեղինակի կյանքի առավել մեծ (կամ առավել կարևոր) մասը (ինչպիսին մի շաբթ դեպքերում մանկությունն ու պատանեկությունն են):

Ինքնակենսագրական ժանրը հիմնված է նկարագրականության և ինքնավերլուծության ձգտման համատեղման վրա: Երկրորդ բա-

դադրիչը (ինքնավերլուծությունը) պետք է փնտրել անտիկ որոշ հեղինակների և լիստույար ժառանգության մեջ, աստվածաշնչյան (ինկուպակարանային մարզաբեների գրքերում) և առավել շափով նորկուպակարանային առաքյալների թղթերում (հատկապես՝ Պողոսի): Սակայն պետք է նկատել, որ ինքնակենսագրությունն ավելին է, քան ինքնավերլուծությունը: Որպես գրական ստեղծագործություն՝ այն պետք է ունենա պատումային ձև:

Իրենց գեղարվեստական մեթոդաբանության համապատասխան՝ ուսալիստ գրողներն եւ ավելի աշխուժացրին ինքնակենսագրական ժանրը: Նրանց երկերում ինքնակենսագրական սկզբունքը համարժեք արտահայտություն գտավ վեպի ժանրում:

Հերոսի ձևավորումը՝ որպես կերպարի կառուցման մեթոդաբանական սկզբունք, իր հերթին հանգեցրեց նրան, որ մանկության ու պատանեկության թեման ինքնակենսագրական ժանրում սկսեց զրադեցնել առանձնահատուկ տեղ: Կանգ առնենք մի քանի օրինակների վրա, որոնք մեզ համար ունեն անկյունաքարային նշանակություն: Առաջին հերթին հարկ է համառոտ բնութագրել Դիքենսի «Դավիթ Կոպերֆիլդ» վեպը (1850): «Սեփական կյանքի պատմության հերոսը՝ Դավիթը, Դիքենսին առավել հարազատ կերպար է: Իր կենացքության բազմաթիվ դրվագներ (մասնավորապես՝ ծանր պատանեկության պատմությունը) հեղինակը «փոխանցում» է իր հերոսին: Առօրեականության դեմ պատանի Դավիթի ուժասպառ անող պայքարն առաջ է բերում հուսահատության տագնապ, սակայն, ի վերջո, դառնում է անփոխարինելի փորձ՝ ձևավորելով և դաստիարակելով նրա անհատականությունը:

Կոպերֆիլդի պատմության մեջ, ըստ Չեսքերտոնի դիպուկ բնութագրման, պակասում են «աղոտ կիսատոները»: Այնտեղ գործում են ամիսառն հերոսներ և շարագործներ, բարին անմիջական հակամարտության մեջ է մտնում շարի հետ, իսկ կյանքը՝ մելոդրամատիկ մեկնություն ստանալով, հաշնում է իր «ողջ հոյակապ հայտնություններով» /Սյլսոն, 1975: 68:/

Դիքենսյան վեպում տիպաբանական կայուն հատկանիշն իր մանկությունից ու պատանեկությունից պատմողի անջրպետվածությունն է, որ գալիս է Օգոստոս Երանելու «Խոստովանության» ավանդույթից: Բարոյախոսական որոնումներով ու ճակատագրի դաֆան հարվածներից մքագնած անցյալը վերստեղծվում է հիշո-

դուրյան արձագանքներից և վերհուշերից: Հայացը ձգելով իր պատանեկությանը՝ Դավիթ Կոպերֆիլդի գիտակցության մեջ ծնվում է մի կերպար, որը հազիվ ճանաչելի է: Գրողը կարծես թե ասում է, որ փոխելով անհատականությունը՝ ժամանակը սրբագրում է և նրա նախապատմությունը: Սա հեղինակի հայեցակարգային կարևորագույն հայտնագործություններից մեկն է, որ կանխագուշակում է 20-րդ դարի այնպիսի հեղինակների գեղարվեստական լուծումները, ինչպիսին, օրինակ, Պրուստը կամ Վուլֆն են:

Կոպերֆիլդի կենսագրությունն ստեղծվում է որպես բարու վերջնական հաղթանակի նկատմամբ համար հավատի և ահազնացող հուսալքության անհաղթահարելի բախում, երբ իրար հետևից հօդս են ցնուում պատանեկան տարիների հույսերը: Գեղարվեստական օժտվածությունը, որ միանգամից չի բացահայտվում իր մեջ, հերոսին ստիպում է հասուկ զգայական սրությամբ ընկալել թե՛ «փորձությունը», թե՛ «ստորոտիթյունը». նավահանգստային բաղամասերի բարքերը, իրավաբանական գրասենյակներում հաստատված կարգերը, ուր նա հասու է լինում գործնական կյանքի դասերին, պառլամենտական հոեսորների հմտությունները, երբ գլուխ հանելով վերջնականապես իրեն տանջող սղագրությունից՝ դառնում է լրագրող ու բանավիճային հոդվածներ գրում առավոտյան հրատարակվող թերթի համար:

Հերոսի պատմության ավարտը հովվերգական է (Ազնես Ուիլֆիլդի հետ միությամբ երջանկանալը): Բայց հոգևոր բախումները, որոնք ծնվել էին դեռ «փորձության» ժամանակներից, մնում են չլուծված, ու նախ և առաջ հատկապես նրանք, որոնք կապված են կյանքի արդարացման որոնումների հետ, ինչն այնքան հաճախ ստիպում է շփվել անարդարության, անզբության, բռնության, բույլերին ծաղրանքի ենթարկելու, անբարոյականների անպատիժ ցինիզմի հետ և այլն: Վերլուծական ինքնակենսագրական վեպի դասական օրինակ կարող է ծառայել Տոլստոյի «Մանկություն» (1852), «Դեռահասություն» (1852-1854), «Պատանեկություն» (1855-1857) եռագրությունը: Ուստի ու եվրոպական իրապաշտական գրականության մեջ նոյնանման բազմաթիվ երկերի շարքում այս գործը մենք առանձնացնում ենք ինչն այս պատճառով, որ այն գեղարվեստականության օրինակ է ծառայել 19-20-րդ դարերի բազմաթիվ գրողների, մասնավորապես Գորկու և Չորյանի համար: Տոլստոյի եռագրութ-

յան բարոյական խնդիրների առնչությամբ փորձենք քննարկել Նիկողենկա Իրտեննի կերպարի կառուցման հիմնական սկզբունքները:

Ինչպես և Դիքենսի վեպում, այստեղ հեղինակային «Ես»-ը հանդես է գալիս միջնորդավորված, ուրիշ հերոսի միջոցով: Թե՛ մեկ, թե՛ մյուս դեաքրում ուս վկայությունն է այն բանի, որ հեղինակները ձգտել են իրենց «Ես»-ի միջոցով արտահայտել ինչ-որ տիպական բան: Այս առիթով հարկ է հիշատակել հետևյալ վկայությունը՝ կապված Տոլստոյի «Մանկության» հրապարակման հետ: Նեկրատով «Սովորեննիկ»-ում տպագրում է «Իմ մանկության պատմությունը» վիպակը, և Տոլստոյը հանդեսի խմբագրի ուշադրությունը հրավիրում է այն բանի վրա, որ վերնագիրը «հակասում է երկի գաղափարին»: «Ում ի՞նչ գործն է իմ մանկության պատմությունը», - նկատում է նա: Եռագրության առաջին մասի նշումներում Տոլստոյն իր ստեղծագործության «հիմնական միտքը» ձևակերպում է հետևյալ կերպ. «Առ Աստված և մերձավորները սերն ուժգին է մանկության տարիներին: Դեռահասության ժամանակ այդ զգացումները խլանում են ցանկասիրությամբ, ինքնավստահությամբ ու փառասիրությամբ, պատանեկության տարիներին՝ հպարտությամբ և իմաստակության նկատմամբ հակածությամբ, երիտասարդ տարիներին կենսավորձը վերածնում է այդ զգացումները»:

Տոլստոյը մարդու զարգացման մեջ բացառիկ դերակատարություն է վերապահում մանկությանը. «Բոլոր ժամանակներում և բոլոր մարդկանց համար երեխան ներկայանում է որպես անարատության, անմեղության, բարության, ճշմարտության և գեղեցկության օրինակ: Մարդը ծնվում է կատարյալ՝ սա մեծ խոսք է, որ ասել է Ուտսոն, և այդ խոսքը, ինչպես բարը, մնում է կայուն ու ճշմարիտ: Ծնվելով՝ մարդը ներկայանում է որպես ներդաշնակության, ճշմարտության, գեղեցկության և բարության նախապատճեր»: Տոլստոյի համար առանձնապես բանկ են մանկան հոգու երկու հատկությունները՝ բարոյական զգացման բնական ու անկեղծ մաքրությունը և աշխարհի հետ ունեցած հարաբերություններում ներդաշնությունը թեթևորեն ու անկաշկան վերականգնելու ունակությունը: Իր կյանքի ամբողջ ընթացքում մարդը պարտավոր է պահպանել մանկական զիտակցության այդ որակները. դրանցում են ամփոփված բարոյական ինքնակատարելագործման անսահման հնարավորություններն ու պա-

շարժերը: Սակայն հասուն աշխարհն ամբողջ կյանքի ընթացքում փորձության է ենթարկում այդ մաքրությունն ու անկեղծությունը, հատկապես այն ժամանակ, երբ նրանք հայտնվում են Մովլայում ու ընկնում բարձրաշխարհիկ հասարակության շրջան, որը հիմնված է արտաքին, հյուսածո փայլ ունեցող փառասիրության, կեղծ քաղաքավարության ու պայմանականությունների վրա: Նիկոլենկային առաջին օրերին թվում է, թե բոլոր մարդիկ այստեղ չեն ապրում, այլ ինչ-որ կեղծ խաղ են խաղում: Սակայն իր համար էլ անկատելիորեն երեխան ներքաշվում է այդ հորձանուուր, և նրան սկսում է դաշտանել բարոյական զգացումը:

Դեռահասությունը մարդու կյանքում չափազանց հիվանդագին շրջան է: Դեռահասի հոգին ցեղական է անկումից. նա կորցնում է բարոյական զգացման անմիջականությունն ու անկեղծությունը, որին հետևում է մարդկանց հետ հաղորդակցվելիս, ներդաշնությունն ու ամբողջականությունը վերականգնելու թերևության ու անկաշկանդության երջանիկ ունակությունը: Զրկվելով պահապան պաշտպանությունից՝ դեռահասի ներաշխարհը բաց է լոկ բացասական զգացումների առջև, որոնք սաստկացնում են նրա հոգեկան ապրումների աղետը: Դեռահասը տաճաշալիորեն ինքնասեր է և չափազանց կենտրոնացած իր զգացմունքների վրա, քանի որ աշխարհի նկատմամբ վստահությունը կորցրել է: Այս իրադրության մեջ նրա անյաշտպան հոգու համար հատկապես կործանարար է աշխարհիկ հարաբերությունների ազդեցությունը, որը ցամաքեցնում է սիրո կենարար ակունքները: Քննուց, վիրավորանքները ներել կարողացող Կարլ Իվանովիչի և Նատալյա Սավիշնայի փոխարեն դեռահասության տարիքում Նիկոլկային շրջապատում են մարդիկ, ովքեր զբաղված են իրենք իրենցով՝ սեփական տիրություններով ու հիվանդություններով, ինչպես տատիկը, իրենց հաճույքներով, ինչպես հայրը: Բարեհով Կարլ Իվանովիչին գալիս են փոխարինելու դեռահասի նկատմամբ անտարբեր դասատուները՝ «չարանենց կիսաժպիտներով», կարծես թե երեխաններին ստորացնելու և վնասելու հասուկ միտումով: Բարոյական զգացումը, սակայն, չի մարում նոյնիսկ նման անբարենպաստ պայմաններում. դեռահասությունից հասունանում է պատաճնեկությունը: Դրա առաջին նշանը Նիկոլենկայի մեջ Դմիտրի Նեխսլյուդովի հանդեպ արթնացած բարեկամական

զգացումն է, որը հերոսին լույս աշխարհ է հանում դեռահաս տարի-ների խավարից:

Պատաճեկությունը նման է վերածննդի և զարնանային բնության նորացմանը. այն յուրօրինակ վերադարձ է դեպի մանկություն, միայն թե ավելի հասուն՝ կյանքի ողբերգականության սուր զիտակցման բովով անցած, դեռահաս տարիների համար բացված: Պատաճեկության շրջանում աշխարհի նկատմամբ «նոր հայացք» է ծնվում, որի էությունը դեռահասության շրջանում մարդկանց հետ միասնության զգացման կորսուի վերականգնման զիտակցական ցանկությունն է: Նիկոլենկա Իրտենի համար դա բարոյական ինքնակատարելագործման ծրագրի իրականացման ժամանակն է, ինչն ուրախությամբ կիսում է Նեխսլուրովի հետ: Ընկերները երազում են այդ ծրագրի օգնությամբ մարդկանց կյանքից վերացնել անարդարությունն ու չարիքը:

19-րդ դարի առաջին կեսին իրեն հաստատելուց ի վեր գեղարվեստական ինքնակենսագրության ժանրն ընդունվում է որպես մի հնարք, որի օգնությամբ կարելի էր արդեն ստեղծել հերոս-պատմողի «ինքնակենսագրությունը» և ոչ թե հեղինակի: Այսպես, պուշկինյան Գրիներ, «ընտաճեկան օրագրում» նկարագրելով իր (հորինված խսկական հեղինակի կողմից) կյանքը, պատկերում է 18-րդ դարի 70-ականների երիտասարդ ոուս ազնվականի կյանքը: Ինքնակենսագրական ժանրի կաղապարն սկսում է տարածվել պատմողական այլ կառուցվածքների վրա:

Սելինջերի վիպակը, որ գրվել է 1951-ին՝ ամերիկյան հասարակության մեջ սերունդների միջև հարաբերությունների հետպատերազմյան ճգնաժամի ժամանակ, պատկանում է հենց այդպիսի «ինքնակենսագրությունների» շարքին, և շնայած գլխավոր հերոսի բնավորության մեկնության բազմաթիվ անկրկնելի գծերին, այնուամենայնիվ Սելինջերի այդ ստեղծագործության «նախատիպ» կարելի է համարել այնպիսի վառ օրինակ, ինչպիսին է Մարկ Տվենի «Հեքլերի Ֆիննի արկածները» (1884):

«Տարեկանի արտում՝ անդունդի եզրին» երկի ապշեցուցիչ օրգանականությունն այն է, որ աշխարհին այստեղ տրվում է երեխայի հայացքի լույսի տակ, հայացք, որ սրությամբ տարրերում է ցանկացած կեղծիք, ինչպիսի հանդերձանքով էլ այն ծածկված լինի: Արձակագիրն անգամ հնարել է բառ-նշանաբան, որը երկար ժամանակ

գործածական էր ամերիկյան երիտասարդության մեջ՝ «phoniness» (ծանածոռություն, ծերծերանք, շինծուություն): Այդ իմաստով վիպակի զիսավոր հերոս Հոլդեն Քոլֆիլը Հերլերի Ֆիննի հեռավոր ժառանգորդն է: Տարբերությունը, անշուշտ, այն է, որ եթե 19-րդ դարի շրջնոյիկը կարող է երազած ազատությունը ձեռք բերել «հնդկացիական տարածքներում», այլ կերպ ասած՝ քաղաքակրթությունից դեռևս չափերված վայրերում, ապա հարյուր տարի անց մեծահասակների խարեական աշխարհից աճջրպետվելու համար նրան հարկ է լինում ապաստանել սեփական հոգում (թեալետ նաև երազում է վաղուց ի վեր գոյություն չունեցող Արևմուտք փախչելու մասին):

Հերլերի Ֆիննը անսոուն բափառական է, հարբեցողի որդի, «ծույլ, անդաստիարակ, անպիտան տղա», որ, քաղաքի բոլոր մայրերի կարծիքով, «չի ընդունում ոչ մի պարտադիր կանոն», սակայն, այնուամենայնիվ, նրանց երեխաների համար մեծ հեղինակություն է: Հերն ապրում է տակառում, իսկ լավ եղանակներին՝ բաց երկնքի տակ: Նրա համար բարձրագույն արժեքն ազատությունն է:

Գործի դիպաշարային հիմնական հանգույցներն այսպիսին են. փախչելով իրեն որդեգրած այրի Դուգլասից, այնուհետև՝ նաև հորից՝ պատանի հերոսը հանդիպում է նույնպես այրուց փախած ստրուկ սևամորթ Զիմին, և նրանք միասին լաստանավով ճանապարհորդում են Սիսիսիպին ի վար: Նրա պատմությունն ավարտվում է հին ընկերոց՝ Թու Սոյերի հետ հանդիպումով և այն տեղեկությամբ, որ միսիս Ուտստոնը փախճանվել է, սակայն կտակով ազատել է Զիմին: Ինչպես տեսնում ենք, և՛ սյուժեով, և՛ բնավորության գծերով Տվենի ու Սելինջերի զիսավոր հերոսների միջև էական տարբերություններ կան, սակայն դրանք շատ կողմերով բացատրելի են դարաշրջանի և տրամադրությունների տարբերությամբ: Հերն իր պատմություններում գրեթե անտեսում է անցյալը. աշխարհում ամբողջապես ապրում է «այստեղ և հիմա» սկզբունքով, և նրա բնավորությունը բացահայտվում է իրադարձությունների զարգացման չափով, որոնց ոիքը տրված է Փարուլային (այստեղ գետով ճամփորդելը դաշնում է Փարուլայի հիմնական հնարք): Հենց սրանով է այն տարբերվում «փնճնակնազրական» բնույթ ունեցող բոլոր վեպերից. այստեղ պատմողի և հերոսի՝ պատմության առարկայի միջև բաժանարար տարածություն չկա: Որոշ վերապահումներով գրեթե նույն բանը մենք տեսնում ենք Սելինջերի վեպում:

Մանկության թեման տարբեր (անգամ հակադիր) ձևով «մեկնաբանող» դիքենսայան և տվենյան նախանձուշները, այնուամենայնիվ, իրար հետ կապված են որոշ ընդհանրություններով: Դա բացատրվում է ոչ միայն թեմայի ընդհանուր ակունքներով, այլև 20-րդ դարում դրանց փոխազդեցությամբ: Օրինակ՝ եթե համեմատենք Տվենի և Սելինջերի վեպերը, կտեսնենք մի էական տարբերություն: Հերի արժեքների համակարգում գիրքը՝ որպես գիտելիքի աղբյուր, ոչ մի տեղ չի զբաղեցնում, մինչդեռ Հոլդենի համար այն սերտորեն կապված է անկեղծության և ճշմարտության, կյանքը ճանաչելու խնդրին: Այդ գիծը Սելինջերի հերոսին ավելի շատ կապում է Մարսին Գորկու և Ստեփան Չորյանի հերոսների հետ՝ ցույց տալով 20-րդ դարի պայմաններում ապրող դեռահաս հերոսի կենական հարցադրումների բարդությունն ու հոգեվիճակի դրամատիզմը:

Մանկությունը երկու նախանձուշներում էլ բնութագրվում է նույն ձևով՝ բարոյապես դրականորեն, արտաքին աշխարհի հակադրությամբ: Ըստ Էության հակադրվում են «քընական մարդն» ու «հականարդկային հասարակությունը»: Այդ «քնական մարդը» երեխան է, որին դեռ չի կլանել հասարակական «մերենան», և հիմնախնդիրը վերջինին դիմակայելն է: Դիքենսայան գծին հատուկ է հիմնականում դրական լուծումը. կյանքի դժվարությունները թույլ են տալիս ձեռք բերել դրական հոգևոր փորձ, պետք է միայն դիրքորոշվել՝ ճանաչելու կյանքը: Տվենյան գծին հատուկ է «պատրանքային» դրական լուծումը, որը հերոսին տանում է այլ՝ էկզոտիկ, երևակայական աշխարհ: Հերոսը խուսափում է ճանաչել այն, ինչը խորը է իր ներաշխարհին: Այդ երկու նախանձուշներում էլ առկա են պարադքսալ պահեր. կյանքը ճանաչելու պահանջը դիքենսայան հերոսին ամենին էլ չի պարտադրում անընդիատ փոխել տարածությունը, մինչդեռ տվենյան հերոսն ստիպված է ներքին որոնումների փոխարեն անվերջ շարժվել արտաքին տարածության մեջ: Եթե առաջինը հատուկ է, այսպես կոչված, ռեալիստական ուղղությանը, ապա երկրորդն իր բնույթով ոռմանտիկական ընդգրում է: Առաջինին սկզբունքորեն խորը է «ընդվզումը» (այսինքն՝ նաև հասարակական կյանքը փոխելու, սեփական պահանջներին հարմարեցնելու նկրտումները), երկրորդին՝ ճանաչողությունը (պատահական չէ, որ ոռմանտիկ հերոսը, որպես օրենք, հանդես է գալիս «ամենագետ» մարդու կերպարանքով):

Ժանրային վերոնշյալ առանձնահատկությունները թույլ են տալիս նյութը համեմատելու ոչ միայն հիշյալ «նախաննուշների» սահմաններում, այլև տարրեր «նախաննուշների» պատկանող երկերում: Դա հնարավորություն է ստեղծում բացահայտելու այն, ինչ վերաբերում է ժանրային ենթատեսակների «անցումային» հատկանիշներին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Уилсон Э. Мир Чарльза Диккенса. М.: Прогресс, 1975.
2. Толстой Л.Н. Собрание сочинений в 20 томах. Т.1, М.: Худ. лит., 1969.
3. Dickens Ch. David Copperfield. London: Collector's Library, 2004.
4. Twain M. Adventures of Huckleberry Finn. London: Bloomsbury, 1996.
5. Salinger J.D. The Catcher in the Rye. Boston, 1951.
6. Չորյան Ստ. Երկերի ժողովածու 10 հատորով, հ. 3, Երևան, «Հայպետհրատ», 1961:

Р. КАЗАРЯН – Жанр автобиографии как форма раскрытия темы детства и отрочества. – Литературный жанр и литературная тема не сразу нашли друг друга. Это результат долгого исторического процесса. Жанр автобиографии является одним из наиболее интересных в огромном разнообразии литературных жанров. Рассмотренные в данной статье произведения являются классическим примером раскрытия темы детства и отрочества в жанре художественной автобиографии.

R. GHAZARYAN – Autobiographical Genre as a Way of Revealing Themes of Childhood and Adolescence. – Literary genre and the theme existed separately. It took centuries till they found each other. This paper dwells upon the development of genre and the theme in the context of time and history of literature. An attempt is made to adduce examples where the themes of childhood and adolescence are relevant.